ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Աջակցություն ԵՄ Արևելյան գործընկերության երկրներին ակտիվների վերադարձի և կազմակերպված հանցավորության հետ կապված այլ հիմնական ոլորտների ուղղությամբ – II փուլ



Իրականացման ժամանակահատված: 01.11.2024 - 31.10.2027

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 1 000 000

Ընդհանուր բյուջե: € 1 000 000

Նախագծի նկարագրություն:

ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող այս ծրագիրը նախատեսվում է իրականացնել Արևելյան գործընկերության տարածաշրջանում 36 ամիսների ընթացքում և հանդիսանում է նախկինում իրականացված գործողության II փուլը: Ծրագրի հիմնական նպատակն է կանխել և հակազդել կազմակերպված հանցավորությանը՝ հատկապես ակտիվների վերադարձի մեխանիզմների (քրեական և ոչ քրեական) արդյունավետության բարձրացման միջոցով: Ծրագրի իրականացման շրջանակում կներգրավվեն համապատասխան ազգային կառույցներ, մասնավորապես՝ Արդարադատության նախարարությունները, Դատախազության գրասենյակները, Ակտիվների վերադարձի և կառավարման մարմինները, ինչպես նաև Ֆինանսական հետախուզության ստորաբաժանումները: Տեխնիկական աջակցության հիմնական ձևերը ներառում են հետազոտական աշխատանքներ, կարողությունների զարգացման միջոցառումներ, ուսումնական այցեր, աշխատանքային խմբերի հանդիպումներ, ինչպես նաև տեխնիկական խորհրդատվություն և մենթորություն ընթացիկ գործերի վերաբերյալ:

Ակնկալվող արդյունքներ:

1. Համապատասխան ազգային մարմինների ներկայացուցիչներին կտրամադրվի հնարավորություն խորացնելու իրենց գիտելիքները զարգացող և ժամանակակից քաղաքականությանն առնչվող գործելակերպերի վերաբերյալ, որոնք նպաստում են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ապօրինի ճանապարհով ձեռք բերված ակտիվների հայտնաբերման, պահպանման և արդյունավետ կառավարման բարելավմանը:
2. Արևելյան գործընկերության երկրների պաշտոնյաներին կտրամադրվի բարձր մասնագիտական խորհրդատվություն և նպատակային աջակցություն՝ կազմակերպված հանցավորության հետ կապված ընթացիկ գործերի շրջանակում ակտիվների հայտնաբերման և վերադարձի գործընթացների արդյունավետ իրականացման համար: